ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 11» դեկտեմբերի 2017 թ. N 322-Ա

ԱՐՓԻՆԵ ՆՎԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

Կարգադրում եմ՝

1. 2018 թվականի դեկտեմբերի 10-ից, մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նշանակված մրցույթի օրը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Ձորագյուղի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արփինե Նվերի Կարապետյանին՝ նրա հետ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ